

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԻՐԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի և հասարակական գիտությունների ֆակուլտետի պրոֆեսոր

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հարավային Կովկասի տարածաշրջանը աչքի է ընկնում սառեցված հակամարտությունների առկայությամբ՝ թե՛ ժանալու վերահաս սպառնալիքներով: Անվտանգության և կայունության համար խնդրահարույց է այն կարևոր հանգամանքը, որ տարածաշրջանի երկրները որդեգրել են տրամագծորեն տարբեր անվտանգության ու պաշտպանական ռազմավարություններ և դաշինքներին ու ուժային կենտրոններին հարելու քաղաքականություններ: Տարածաշրջանային անվտանգությանը բոլորովին չի նպաստում նաև գլոբալ առումով շահագրգիռ պետությունների ու միջազգային կազմակերպությունների շահերի տարամիտումը:

Հոդվածում հեղինակի կողմից եզրահանգում է արվում, որ պաշտպանական կարողությունների հետևողական զարգացումը Հայաստանի տրամաբանված ընտրությունն է, որը բխում է պետության և ժողովրդի անվտանգության, ինչպես նաև խաղաղության պահպանման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև խաղաղության պարտադրման նպատակներից: Տվյալ նպատակներին հասնելու համար Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է մի գործընթաց, որը կոչվում է Պաշտպանության ռազմավարական վերանայում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ պաշտպանության ռազմավարական վերանայում, պաշտպանական բարեփոխումներ, ռազմական

քաղաքականություն, անվտանգության միջավայր, հայեցակարգ, վերլուծություն, սպառնալիք, կանխատեսում, քաղաքացիական վերլուծություն, հանրային իրազեկում:

Առկայացման քերականական կարգը բնորոշ է այն բառերին, որոնք ունեն առարկայության իմաստ. հետևաբար այն գոյականի քերականական հատկանիշ է: «Առկայացումը իմացաբանական ըմբռնում է, որը լեզվի մեջ դրսևորվում է բառայնորեն կամ քերականորեն, երբեմն էլ՝ մնում արտակառուցվածքային ոլորտում» [1, էջ 50]:

Խոսքի մեջ առարկայանիշ միավորը իրադրական արտահայտություն է ստանում որոշակի միջոցներով: Հայերենում առարկայանիշ բառին իրադրայնություն են հաղորդում հոդերը: Այդ պատճառով առկայացման կարգը անվանում են նաև հոդի կարգ [2, էջ 26–56]: **Ս, դ, ն/ը** մասնիկների միջոցով է արտահայտվում «անունների հարաբերությունը դեպի հաղորդակցողները և հաղորդակցումը» [3, էջ 139]:

Հոդառությունը բնորոշ է գրական հայերենի բոլոր շրջաններին, բայց նրանց իմաստագործառական նկարագիրը յուրաքանչյուր շրջանում ունի իմաստային և կառուցվածքային տարբեր հատկանիշներ, որոնցով էլ պայմանավորվում են նաև նրանց ոճական հատկանիշները:

Միջին հայերենում հոդերը մի կող-

մից ցուցաբերում են գրաբարատիպ հատկանիշներ, մյուս կողմից հանդես են գալիս նոր դրսևորումներով՝ պայմանավորված քերականական այնպիսի իրողությունների ձևավորմամբ, որոնք բնորոշ են միջին հայերենին, օրինակ՝ ուղղական և հայցական հոլովների նույնացումը, որոշիչ-որոշյալի՝ առդրությանը կապակցությունը և այլն:

Առկայացման կարգը՝ իբրև քերականական կարգ, ունի ձևախմաստային տարբերակվածություն: Ձևային առումով առկայացման կարգը արտահայտվում է որոշակի կառուցվածքային կաղապարներով, օրինակ՝ **այգին=այգի** (հիմք)+**ն** (որոշիչ հոդ), **այգիները=այգիներ** (երկրորդային հիմք)+**ը** (որոշիչ հոդ) կամ՝ հին հայերենում **ամս=ամ** (հիմք)+**ս** (հոդ): **երեսուն ամս** կառույցում **ս** ձևությամբ հոլովակերտ է և հոգնակի հայցականի ցուցիչ. **ամաս** ձևում կունենանք **ամա** (երկրորդային հիմք)+**ս** (հոդ), օրինակ՝ **ամաս այտորիկ**:

Ըստ Հ. Պետրոսյանի տարբերակած կառուցվածքային կաղապարների՝ բուն հիմքը բուն բառային հիմքն է (**տուն+ը, օր+ը**), երկրորդական հիմքը բառաձևի կառույցն է՝ իբրև հիմք, օրինակ՝ **տներ+ը, օրվա+ն+ից** և այլն: Այս դեպքում այն սահմանումը, ըստ որի՝ բառի հիմքը վերջավորությունից առաջ ընկած մասն է, վերաբերում է բուն հիմքին, իսկ բառաձևավերջավորություն կառույցում հիմքը (այս դեպքում երկրորդային) վերջին ձևությամբ (հոգնակերտ, հոլովակերտ մասնիկներ և հոդեր) առաջ ընկած մասն է, օրինակ՝ **գիրքս=գիրք+ս** և **գրքիս=գրքի+ս**:

Այս առումով լեզվաբանական միտքը տարամետ մոտեցումներ է արձանագրում, քանի որ լեզվաբանների մի մասի կարծիքով կա մեկ հիմք՝ վերջավորություն(ներ)ից առաջ ընկած մասը, օրինակ՝ **աշակերտներս=աշակերտ(հիմք)+ներ**(հոգնակերտ)+**ս**(հոդ):

Մեր կարծիքով՝ առկայացման կարգի նկարագրի և նրա ձևավորման՝

հոդառության բոլոր կաղապարները ստանալու համար ձիշտ կլինի առաջին մոտեցումը. բուն հիմքի (բառային) և երկրորդային հիմքի (բառաձևի) տարբերակվածությունը հնարավորություն կտա քննելու հոդի կառուցվածքային գործառնության բոլոր հնարավոր դեպքերը ճշգրիտ ձևակերպումների համար, դրանց կանոնարկվածության սահմանը և նրա համեմատ բացառությունները գտնելու համար:

Միջին հայերենը բնորոշվում է քերականական իմաստների արտահայտման բազմաձևությամբ, քանի որ գրաբարյան շատ կառույցներ փոփոխություններ են կրում, և ձևավորվում են նոր միավորներ: Հոդի գործածությունը նույնպես դեռևս կանոնարկված չէ, քանի որ գրաբարատիպ կառույցներին գուցահեռ դրսևորվում են հոդառության նոր իրողություններ, որոնք նույնպես լիովին կանոնարկված չեն: Խոսելով առկայացման կարգի՝ միջին հայերենում տարածված դրսևորումների մասին՝ կարևորում ենք ընդգծել այն փաստը, որ հոդառության նկարագիրը հաճախ ընդհանուր իրողությունների հետ միասին ստանում է մասնավոր դրսևորումներ: Օրինակ՝ չափածո խոսքում տարածված է ստացական հոդի գործածությունը անձնական դերանվան հետ, որը խոսքը դարձնում է ավելի ընդգծուն:

Միջին հայերենում էական փոփոխություններ են կատարվում հոլովման համակարգում, ինչը նույնպես իր անմիջական ազդեցությունն է թողնում հոդի գործածության վրա, օրինակ՝ ուղղական և հայցական հոլովների նույնացման գործընթացի արդյունքում որոշյալ առման միավորները՝ **զ** նախդիրը և **ն** որոշիչ հոդը, գործածվում են ուղղական հոլովաձևի հետ:

Առկայացման քերականական կարգին անդրադարձել են մի շարք քերականներ, որոնք տարակարծիք են միջին հայերենում առկայացման կարգի որոշյալի ենթակարգի արտահայտման խնդրի

րում: Այսպես՝ Հ. Պետրոսյանը կարծում է, որ «միջին հայերենի դեռևս կազմավորման շրջանում որոշակի արտահայտություններ է ունենում **ս**-ի ձևաբանական մի տարբերակ ևս. դա **ք** հոդն է: Այս շրջանից սկսած՝ որոշյալ առան ձևույթներ կայանում է **ս** և **ք** ենթաձևույթներով դիրքային նույն բաշխումով, ինչ ունենք նոր հայերենում» [4, էջ 127]:

Յ. Կարստը «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» աշխատության «Հավելված»-ում, որտեղ խոսում է միջին հայերենի շարահյուսական առանձնահատկությունների մասին, իրավացիորեն նշում է, որ որոշյալ առան համար միջին հայերենն ուներ **ս** ձևույթը, որը՝ իբրև որոշիչ հոդ, «կիլիկյան հայերենում լավ զարգացած է արդեն» [5, էջ 362-363], և դրանով նա տարբերվում է գրաբարից, «որտեղ և դերանվանական վերջածանցը, ինչպես հայտնի է, դեռ կրում է հիմնականում դերանվանական բնույթ: Մյուս կողմից՝ ձևական առումով այն տարբերվում է նաև նոր հայերենից, որտեղ հոդի հին **ս** ձևը թեև պահպանվում է ձայնավորից հետո, բայց բաղաձայնից հետո դառնում է **ք**» [5, էջ 363]:

Լ. Հովսեփյանը, քննելով որոշյալության քերականական կարգի դրսևորումները միջին հայերենում, գալիս է ձգգրիտ եզրահանգման. «Միջին հայերենում **ս** որոշիչ հոդը չունի իր դիրքային տարբերակը՝ **ք**, որ ավելի նոր ժամանակների ծնունդ է և զարգացել է աշխարհաբարում՝ հնչյունական որոշ օրենքների գործողության հետևանքով» [6, էջ 79]:

Է. Մկրտչյանը «Աշխարհաբարի տարբերը միջնադարի գրական հուշարձաններում» աշխատության մեջ, միջնադարի մատենագրությունը ներկայացնող տարբեր ժանրերի երկերից քաղած փաստական հենքի վրա քննելով հոլովման համակարգում տեղի ունեցող փոփոխությունները միջին հայերենում, չի փաստում որոշիչ հոդի **ք**-ով ոչ մի

տարբերակ: Նշենք, որ խոսելով հոլովաձևերի մասին՝ հեղինակը բնորոշում է միջին հայերենում ձևավորված նոր հոլովակազմիչները, որոնք գործածվում են գրաբարյան ձևերին զուգահեռ, ինչպիսիք են՝ **ից**, **ուց** ձևույթները բացառականի համար, **ով**-ը գործիականի համար, **ում**-ը՝ ներգոյականի և այլն: **Ն** որոշիչ հոդը չունի հոլովատարբերակիչ և հոլովակազմիչ դեր, ուստի հեղինակը դրան անդրադառնում է ուղղական և հայցական հոլովների ձևային նույնացման քննությունը ներկայացնելիս [7, էջ 72-142]:

Մենք նույնպես կարծում ենք, որ որոշյալ առան համար մինչև ուշ միջնադար գործածվում էր **ս** հոդը, որի **ք** տարբերակը դեռևս ձևավորված չէր: Իհարկե, տեսականորեն նրա ձևավորումը միջին հայերենում սպասելի էր, քանի որ **քն**-ով վերջացող բառերը (ձուկն, դումն, շարժումն և այլն) հանդես են գալիս առանց **ս**-ի այն դեպքում, երբ անորոշ առան գործառույթ ունեն (օրինակ՝ Ես **ձուկ** ու դու ջուր, հոգի՛, առանց ջուր՝ ձուկըն մեռանի... (Քուչակ [8], 277)), և բաղաձայնով սկսվող բառերից առաջ այդ բառերի՝ **ք**-ով ձևերը (ձուկը, մուկը, շարժումը) պիտի գործածվեին իբրև **ս**-ով ձևերին զուգահեռ կառույցներ՝ դիրքային տարբերակներ, սակայն իրականում **ք**-ն իբրև այդպիսին շատ ավելի ուշ է գործածվում:

Միջին հայերենի՝ մեր կողմից ուսումնասիրված փաստական-մատենագրական նյութը **ք**-ի գործածության օրինակ չի տալիս:

Որոշյալ և անորոշ առումները՝ իբրև առկայացման կարգի ենթակարգեր, միջին հայերենում ունեին գործածության հետաքրքիր դրսևորումներ: Որոշյալի առան ձևույթը **ս**-ն էր, անորոշի առան ձևույթը՝ **մի** (**մ**, **մը**, **մին**, **մն**) անորոշություն արտահայտող բառը, որ ձևույթի արժեք է ձեռք բերում: Անորոշ առումը ունի նաև զրո ձև:

Միջին հայերենում ուղղական և

հայցական հոլովները ձևային տարբերակվածություն չունեն. գրաբարում հայցական հոլովը որոշյալ առման համար գործածում էր **զ** նախդիրը: Միջին հայերենում այն պահպանվում է երկար ժամանակ և դրվում է նաև ուղղակահի վրա վերը նշված պատճառով: Բայց որոշյալ առման համար **զ**-ին գուգահեռ գործածվում է նաև **ն** որոշիչ հոդը: «Ջթոքն սպասաւոր է կարգեր աստուած սրտին, որպէս ծառայ թագաւորի, որ հանապազ հով հարկանէ և զջերմութիւնս զովացուցանէ, վասն այնորիկ բնութիւնն թոքին որպէս զփութ դարբնի, որ զհողմն յինք քարշէ ընդ խոչակն» [9, էջ 51]: «Ստեղծեց աստուած զլերդն և եդիր տանուտէր ամէն անձինն և տաք և գէճ արար զինք» (ԱՄՕԲ, 51):

Ջ նախդիրը միշտ չէ, որ **ն**-ի հետ գործածվում է, օրինակ՝ «...իմանայ հիւանդութեան պատճառն...» (ԱՄՕԲ, 1):

Պետք է նշել, որ բոլոր հեղինակների մոտ տիրապետող է **զ**-ի և **ն**-ի համատեղ գործառնություն ուղղակահի: **Ջ** նախդիրը հայցականում կարող էր նաև չգործածվել, օրինակ՝ «Էհաննայ ասէ նոյն պատճառքդ և նոյն նշանքդ» [10, էջ 8]:

Է. Մկրտչյանը, հանգամանորեն անդրադառնալով ուղղակահի և հայցական հոլովների նույնացմանը միջին հայերենում, փաստական հարուստ նյութի հիման վրա իրավացիորեն նշում է, որ «նախդիրների անկման, ինչպես նաև հոգնակերտ **ք** մասնիկի սահմանափակ գործածության պատճառով **ս** հոլովակազմիչով հոգնակի հայցականի դուրս գալու հետևանքով հայցական հոլովը զրկվում է ձևային դրսևորման իր միջոցներից: Նրա իմաստներն արտահայտվում են մերթ ուղղակահի, մերթ տրական հոլովաձևերով: Սա հայցականի մահացման աստիճանական ընթացքն էր, որը սկսվել էր բանավոր լեզվում ավելի շուտ» [7, էջ 118]: Այն իր արտահայտությունն է գտնում նաև **ն** որոշիչ հոդի գործածությունում:

Միջին հայերենում սեռական և տրա-

կան հոլովները նույնպես ձևային նույնություն ունեին, և սեռականը ևս ստանում էր որոշիչ հոդ, օրինակ՝ «... գուշակ է, որ **ցաւուն** հիմն թանձր է»: «Ջնշանին իմանալ և զհիմն **ցաւոցն** ամէն» (ԱՄՕԲ, 80):

Հեղինակը միննույն նախադասության մեջ սեռականը կարող է գործածել որոշյալ և անորոշ առումներով՝ սպասելի որոշյալի փոխարեն, օրինակ՝ «Եւ ստածումն այն է, որ **եասամինի** և **նասրին** ջուրը ի յականջն կաթեցնես» (ԱՄՕԲ, 147):

Նույն օրինակում տեսնում ենք նաև ուղղակահի հայցականի գործածությունը միայն **ն** որոշիչ հոդով՝ առանց **զ** նախդիրի: Ա. Ամասիացին սեռական հոլովը հիմնականում գործածում է որոշիչ հոդով. «Գիտացիր, որ **հիւանդին** աղէկ նշան է այն, որ **երեսին** գունն ի տեղն լինի, և շարժմունքն թեթև լինի... և **քնուն** ի ժամն ի քուն լինայ» (ԱՄՕԲ, 80):

Միջին հայերենում **ն** որոշիչ հոդը գործածվում էր տարբեր հոլովների հետ, ինչը բնորոշ էր նաև գրաբարին: Բերենք բնագրային օրինակներ՝ «... և զթեթևութիւն ծանրութեան այրուծիոյն» [11, էջ 44], «զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ...» (Եղ., 46), «Գանձակ Գանջայի ի իւր **վիճակովն** եւ Ջակամով, մինչև **ի դաշտն** Գալայ, եւ կայ ի նմա սուրբ **ուխտն** Խորանաշատ եւ Եղիշէի **առաքելոյն աթոռն**» [12, էջ 11], «... որ ի Ղուկաս **աւետարանչէն** խնդրեաց զԱւետարանն և զգործս **Առաքելոցն**» (ԱՎՎ, 23), «Այլ յովկիանոս **ծովն** ոչ գոյ կենդանի գատ ի Լեիաթանէն եւ ամէն որ...» (ԱՎՎ, 5), «...այլ և զբազում գաւառս յիշխանութենէ **սուլտանին** հոռոմոց» [13, էջ 280], «...**ի քաղաքէն** Գանձակաց» (ԿԳՊՀ, 207), «...նշան է զհիճութեան, պատճառն **ի սաֆրայէն** է...» (ԱՄՕԲ, 81), «Բագարատ ասէ...» (ԱՄՕԲ, 145), «Մարձուճն ասէ...» (ԱՄՕԲ, 145), «Էհաննան ասէ...» (ԱՄՕԲ, 146), «Հունան ասէ...» (ԱՄՕԲ, 147):

Հատուկ անունների հետ **ն** որոշիչ հոդն ունի հետաքրքիր մի կիրառություն

ևս. հատուկ անունը դրվում է անորոշ առումով, իսկ նրա որոշիչը՝ որոշյալ առումով. «...ուստի էին **սուրբն Գեորգ եւ սուրբն Սարգիս**՝ Նահատակքն Քրիստոսի.....» (ԱՎՎ, 23), «...Արածանի **զեան Եփրատ**» (ԱՎՎ, 23), «...դարձեալ գօր ժողովեաց մեծ **հագարապետն Իւանէ**» (ԿԳՊԸ, 206): Թվականների հետ գոյականը դրվում է որոշյալ առումով, օրինակներ՝

«Դարձեալ ի մտանել **ամին** երկրորդի փախուցանելոյ զՂիաթագին սուլտանն» (ԿԳՊԸ, 292): «Իսկ այն, եթէ **ի հինգ ամսոյն** վաղիւն աւետեաց տոնենք» (ԿԳՊԸ, 130):

Նախադրությունների և կապերի հետ նույնպես գոյականը կարող է գործածվել որոշիչ հոդով, օրինակ՝ «... ի վերայ **կոնակին**», «Բայց ցուցումն վասն **համին**» (ԱՄՕԲ, 80):

Գրաբարում հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ **զ** նախդիրը, որն ուներ որոշյալության իմաստ, դրվում էր հատկացուցչի վրա, և հատկացյալն էլ հանդես էր գալիս **ն** որոշիչ հոդով: Այս կառույցը տարածված է նաև միջին հայերենում: Համեմատենք՝ «**զնորա** բարերարութիւնս մեր» (Եղ., 58), «... գտիեզերական **զիւր** իշխանութիւնս» (Եղ., 88), «...զի ընկալցի **զմեր** մահն իբրև զանմահիդ» (Եղ., 82), «...յառաջն կու պիտի որ զդեղերուն կերպն ճանաչէ...» (ԱՄՕԲ, 9), «Եւ թէ **զհիւանդին** ցաւն չիմանայ» (ԱՄՕԲ, 9): Սակայն այս գործառույթը նույնպես կանոնարկված չէ, և միևնույն նախադասության մեջ հեղինակը կարող է հատկացուցիչը դնել որոշյալ առումով, իսկ **զ**-ն՝ հատկացյալի վրա: Օրինակ՝ «...իմանայ **հիւանդին զմահն** և **զկեանքն**, հիւանդութեան պատճառն և **զբնութիւն հիւանդին**» (ԱՄՕԲ, 91), «...և ի **քնուն** մէջն շատ զրուցէ» (ԱՄՕԲ, 145):

Ն հոդը հանդես էր գալիս նաև խոսքի մասերի փոխանվանական գործածությանը՝ նրանց հաղորդելով առարկայական իմաստ: Օրինակ՝ «Դձվձանիսն ասէ, թէ **լաւն** այն է, որ հոկնայ առնես»

(ԱՄՕԲ, 147):

Միջին հայերենում հոդ կարող էր ստանալ նաև անորոշ դերբայը, օրինակ՝ «զի ի **գալն** Թադետսի առաքելոյն զԹէոփիլոս աշակերտն իւր» (ԱՎՎ, 23), «Քրտինքն շատ **գալն** հիւանդին՝ նշան է գիժութեանն պատճառն» (ԱՄՕԲ, 81):

Անորոշ առման համար առկա է **մի** ձևույթը՝ իր տարբերակներով, և անձնույթ՝ 0 ձևը: Յ. Կարստը, խոսելով **մի** ձևույթի՝ իբրև անորոշության իմաստի արտահայտման միավորի մասին, վկայում է, որ միայն մեկ տարբերակում է հանդիպել **մին** ձևին՝ ձայնավորից առաջ՝ «չտայ փող **մին** յետ» [5, էջ 362]:

Մի անորոշ հոդը բնորոշ է այլ լեզուների ևս: Ըստ Հ.Աճառյանի՝ այն ավելի վաղ ծագում ունի, քան որոշյալը: «Հարց է, թե լեզուների մեջ ո՞ր հոդն է ավելի առաջ սկսում, որոշյալ, թե՞ անորոշ: Բայց երևի թե անորոշ հոդը ավելի հին է, որովհետև նա ծագում է **մի** թվականից, որ լեզվի մեջ միշտ էլ պատրաստ գոյություն է ունեցել: Որոշիչ հոդն է, որ ժամանակի ընթացքում պիտի ստեղծվի այս կամ այն ձևից» [14, էջ 955]: Գրաբարում ևս ունենք **մի** բառի կիրառությունը անորոշ առման համար, օրինակ՝ «Եւ գտեալ **զայր մի** թարգման վրացերէն լեզուի» [15, էջ 110]: Կամ՝ «**այր մի** երէց աղուան ազգաւ Բենիամէն անուն» (Կոր., 116):

Միջին հայերենում **մի**-ն անորոշ առման համար հաճախ է գործածվում. այն ունի **մի**, **մն** տարբերակները: Բերենք օրինակներ՝ «Երևեցոյց **այր մի** ի մէջ նորա» (ԿԳՊԸ, 276), «Գիտացի՛ր, որ **քիչ մն** հիւանդութիւն կայ», «Հանդէս ունիմ **բան մի** վիճի» (Ֆրիկ, 182):

Զ. Ազուլեցին չի գործածում նաև **ն** հոդը, օրինակ՝ «Դարձեալ **ես Զաքարիայ** (չկա **ս** դիմորոշ հոդը - Ի. Մ.) հարց ու փորձելով իմացայ իմ հայր Աղամիրէն, մայր Սավդուլէն, որ թվին ռեթումն **ես** անարժան **Զաքարիայ** որ մորէ ծնայ սուրբ Գէորգի կիրակի օրն, կէս օրէն յետն» [16, էջ 5]:

Վերը նշել ենք, որ առկայացման ենթակարգերից են նաև ցուցական, ստացական և դիմորոշ քերականությունները:

Ցուցական իմաստի համար գործածվում է **ս** հոդը: Միջին հայերենում այս իմաստով այն հաճախ է հանդիպում, բայց իմաստով տարբերակված բառերի շրջանակում, օրինակ՝ աշխարհ բառի կամ ժամանակ ցույց տվող բառերի հետ: Դիտարկենք օրինակներ՝ «...զի նա եւս բոլորածիր պատեալ է գմիջոց **աշխարհիս**, այլ ոչ հաւասարապէս» (ԱՎՎ, 6): Եթե աշխարհ բառն ունի իրեն որոշյալ դարձնող լրացում, **ս**-ն ձեռք է բերում ստացական իմաստ: Օրինակներ՝ «Իսկ Հայաստան **աշխարհս** խառն է յԱսիոյ եւ յԵւրոպիոյ, սկսեալ նախ ի դրանէն Հոնաց» (ԱՎՎ, 9): «**Գիշերս** ես դուրս ելայ...» (Քուչակ, 292): «**Աշխարհս** է ի ծով նըման, ով որ գայ՝ անթաց չմնայ» (Հ. Երզնկացի, 210): «**Ի թվականութեանս** հայոց Ձե ամին և ամսոյն ի դեկտեմբերի ԻԵ-ին, օրն հինգշաբթին և ծնունդն էր փրկչին այլազգեաց» (ԱՄՕԲ, 5):

Ս, դ, ն հոդերը **այս, այդ, այն** դերանունների հետ գործածվում են գրաբարին ոչ բնորոշ գործառնություն: Գրաբարում գոյականը համարժեք հոդ էր ստանում, եթե **այս, այդ** կամ **այն** դերանունը նրա հետ գործածված էր հետադաս, օրինակ՝ յաշխարհէս յայսմանէ, աշխարհիդ այդմիկ և այլն: Միջին հայերենում դերանունն ունի նախադաս կամ հետադաս գործածություն և հոլովով չի համաձայնում գոյականին: Գոյականը ստանում է համարժեք հոդը, օրինակ՝ «**Ձայս գրոցս** անունն անուանեցոք օգուտ բժշկութեան» (ԱՄՕԲ, 5): «**Ի յայդ ծովէդ** բաժանի բազում խորշ ծովուց և կղզիք բազումք» (ԱՎՎ, 7), «անկանի դուռն այն» (ԱՎՎ, 9), «...եւ վասն **այն** պատճառին անդ գնաց Լուսաւորիչ Հայոց» (ԱՎՎ, 23):

Նշենք, որ ցուցական դերանվան հետ գոյականը կարող է ստանալ **ն** որոշիչ հոդը, օրինակ՝ «Եւ բայց **գայս ցուցումն** խիստ աղէկ ճանաչել կու պիտի և գն-

շանին իմանալ» (ԱՄՕԲ, 80), բայց նույն տեղում կարողում ենք՝ «Եւ **այս** ամէն **նշաննիս** աղէկ նշան է» (ԱՄՕԲ, 80): Հավելենք, որ տարածված է **այս, այդ, այն** դերանունների ուղիղ ձևերի հետ համարժեք **ս, դ, ն** հոդերի կիրառությունը, որոնց փոխարեն **ն** որոշիչ հոդի գործածությունը արդեն կա, բայց ավելի հազվադեպ:

Միջին հայերենում տարածված է **ս** և **դ** հոդերի գործածությունը ստացական իմաստով: Ինչպես՝ «Իսկ երկրորդ **հատուածիս** դիցուք գլուխ զլուսաւորիչս կողմանցն Աղուանից որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոյ» (ԿԳՊՀ, 192): Շատ հաճախ էլ **ս** և **դ** հոդերը կիրառվում են առաջին և երկրորդ դեմքերի դերանունների սեռականի ձևերի հետ՝ ստացականության իմաստը առավել շեշտելու նպատակով: Նման գործառնությունը հատկապես տարածված է չափածո խոսքում:

«Գոհ եմ աստուծոյ բարոյն, որ **ի քո**

Տեսոյդ խըլըսայ »: (Հ. Ե., 211)
«Լոյս **երեսացդ** եմ **քո** փափաք»:
(Հ. Թլ., 246)

«Ի ձեր սըրտիդ դուք սէր չունիք»:
(Գ. Աղ., 307)

Դ-ն **ս**-ի նման բազմիմաստ էր. այն նույնպես ուներ ցուցական և ստացական իմաստներով կիրառություն: Դրա փայլուն օրինակներն է տալիս Նահապետ Քուչակը իր հայրեններում: Դիտարկենք դրանցից մեկը.

«Միրեմ **գայդ** սիրուն **երեսդ**,
որ լուսին ի մօտն է գերի,
Պագնեմ **գայդ** բարկուկ **պուկունքդ**,

որ շաքարն ի մօտն է լեղի,
Թուխ **աչքդ** ու կամար **ունքերդ**
քան զծովն կու գարնէ ալի.
Բերնիկդ է ի շիշ նման,
որ վարդին ջրովն է լի»:
(Քուչակ, 295)

Ընդգծված առաջին երկու բառակապակցություններում **դ**-ն ունի ցուցա-

կան իմաստ, մյուսներում՝ ստացական: Վերջին իմաստով **ս** հոդը գործածվում է նաև հարակատար դերբայի հետ, օրինակ՝ «**Դարցեալ**, ով սիրելի եխպայրք, թեպետ **գրածս** անշահ այ, սւպայ շատ շահավոր է իմացողի» (ԶԱՌ, 5):

Այս կառույցներում առկա է նաև կողմնակի ենթակայի իմաստը. «գրածս / ինչ **ես** եմ գրել»: **Ս, դ** հոդերին բնորոշ է բազմիմաստությունը, ինչպես նոր գրական հայերենում է: **Ն**-ի մեջ ամրակայված է որոշյալության իմաստը, իսկ **ս** և **դ** հոդերն ունեն դիմորոշ, ստացական և ցուցական իմաստներով գործառույթ, ըստ որում՝ **ս**-ն դիմորոշ իմաստով կարող է համաձայնել **ես** դերանվանը և բացահայտիչ-բացահայտյալ կապակցության մեջ դրսևորել դիմային և հոդառության համաձայնություն, բայց միաժամանակ նույն կառույցում հանդիպում է չհամաձայնեցված բացահայտյալ: Օրինակ՝ «Այսպէս գիր մն շինեցի **ես** անպիտան և անարժան նուաստ **ծառայս** աստուծոյ Ամիրտովլայթ **բժիշկն** Ամասիացին ի մայրաքաղաքն ի Ֆիլիպայ» (ԱՄՕԲ, 5):

Վերոհիշյալ օրինակում կա **ս** դիմորոշ հոդի հետաքրքիր կիրառություն. ես ծառայս կառույցում ունենք դիմային համաձայնություն, բայց շարունակության մեջ բժիշկս ձևի փոխարեն առկա է չհամաձայնեցված բժիշկն Ամասիացին ձևը: Կամ՝ «Դարձեալ **ես Զաքարիայ** հարց ու փորձելով...» (ԶԱՌ, 5): Վերջին օրինակում արդեն բացահայտիչը ոչ մի հոդ չունի:

Հոդառության բերված փաստերը ևս մեկ անգամ վկայում են, որ ի թիվս լեզվական այլ իրողությունների՝ առկայացման կարգի դրսևորումների մասին խոսելիս պետք է ընդգծել, որ նշված օրինաչափության ձգտող իրողությունները անպայման ունեն իրենց բացառությունները: Այնուամենայնիվ, առկայացման կարգի արտահայտության տարածված կառույցները արդեն վկայում են այն մասին, որ խնդրո առարկա

բերականական կարգի՝ միջին հայերենին բնորոշ այնպիսի իրողություններ են օրինաչափության ձգտում, որոնք պիտի կանոնարկվեին նոր գրական հայերենում, հատկապես արևմտահայերենում: Դրանցից են, օրինակ, որոշիչ հոդի կիրառությունը բոլոր հոլովների հետ կամ **մի** անորոշ հոդի գործածությունը **մի, մն** տարբերակներով:

Այսպիսով, առկայացման կարգը միջին հայերենում արտահայտվում է **ն** հոդով՝ իբրև որոշյալի ենթակարգի արտահայտման ձևույթ, **մի** բառով՝ իբրև անորոշի ենթակարգի արտահայտման միջոց, որն ունի **մին** (հազվադեպ), **մն** տարբերակները: **Ն** որոշիչ հոդը չունի հոլովակազմիչ դեր. այն հանդես է գալիս բոլոր հոլովների հետ համապատասխան հոլովակազմիչներից հետո: **Ն**-ն հաճախ հանդիպում է **զ** նախդրի հետ ուղղական-հայցականի կազմում: Միջին հայերենում հայցական հոլովը հիմնականում արտահայտվում է ուղղականաձև, անձի առման դեպքում՝ նաև տրականաձև, ուստի որոշիչ **ն** հոդի գործառույթը վերաբերում է ուղղական հոլովին: Սեռականը նույնպես հանդես է գալիս **ն** որոշիչ հոդով, ուստի սեռական և տրական հոլովների համար այն տարբերակվող գործառույթ չունի. ևս մի ավացույց այն փաստի, որ **ն** որոշիչ հոդը չունի հոլովակազմիչ դեր:

Ս, դ հոդերը ունեն դիմորոշ և ստացական նշանակություններ, հաճախ հանդես են գալիս համարժեք դերանունների սեռական հոլովաձևերի հետ, ինչը արևելահայերենում սխալ ձև է համարվում (սերդ կամ քո սերը). միջին հայերենում օրինաչափ է քու սերդ ձևը:

Ն-ն երրորդ դեմքի դիմային ցուցիչ դերում արժևորվում է ավելի շուտ որոշիչ հոդի իմաստով, քան դիմային:

Այս, այդ, այն դերանուն որոշիչները դրվում են եզակի թվով ուղղականաձև, այսինքն՝ հոլովով և թվով չեն համաձայնում որոշյալին և գործածվում են նախադաս, բայց որոշյալը կարող է

ստանալ **ս** կամ **դ** հոդը: **Ս** հոդը ունի ցուցական նշանակություն, և այդ կիրառությունը հաճախ ուղեկցվում է աշխարհ բառի կամ ժամանակ ցույց տվող բառերի հետ, ինչը ժառանգել է նաև արևելահայերենը, օրինակ՝ գիշերս (այս գիշեր), աշխարհս (այս աշխարհը), սակայն եթե աշխարհ բառն ունի կոնկրետացում, **ս** հոդը ստանում է իմ, մեր իմաստները:

Թվականների հետ գոյականները գերազանցապես գործածվում էին որոշիչ հոդով: Անորոշ դերբայը ևս կարող էր ստանալ **ս** հոդ: Այն դրվում էր նաև այլ

խոսքի մասերի վրա նրանց փոխանվանական գործառույթի դեպքում: Հատուկ անունները հանդես էին գալիս որոշիչ հոդով և առանց հոդի. հատուկ անունը կարող էր դրվել անորոշ առումով, իսկ նրա որոշիչը՝ որոշյալ առումով, օրինակ՝ սուրբն Սարգիս:

Առկայացման կարգի ենթակարգերի համար գործածվող **ս, դ, ն** հոդերը միջին հայերենում բազմիմաստ էին, ինչպես հին և նոր գրական հայերեններում:

Հոդվածի ներկայացման ամսաթիվ՝ 27.06.2016թ.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱԱՕԲ - Ամիրդովլաթ Ամասիացի, Օգոստ բժշկություն, Եր., 1940:
2. ԱՎՎ - Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Բարիզ, 1960:
3. Եղ. - Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի, Եր., 1989:
4. ԶԱՌ - Զաքարիա Ագուլեցի, Որագրություն, Յերեվան, 1938:
5. ԿԳՊՀ - Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1961:
6. Կոր.-Կորին, Վարք Մաշտոցի, Եր., 1941:
7. ՄՀՋՄ - Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:
- 8.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987
2. Պետրոսյան Հ., Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Հոդային կարգ, Եր., 1976
3. Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969
4. Պետրոսյան Հ., Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Հոդային կարգ, Եր., 1976
5. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002
6. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Եր., 1975
7. Մկրտչյան Է., Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980
8. Չափածո օրինակները բերվում են ըստ «Հայ հին և միջնադարյան քնարերգություն» գրքի, Եր., 1986:
9. Ամիրդովլաթ Ամասիացի, Օգոստ բժշկություն, Եր., 1940
10. Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832
11. Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի, Եր., 1989
12. Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Բարիզ, 1960
13. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1961
14. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1957
15. Կորին, Վարք Մաշտոցի, Եր., 1941
16. Զաքարիա Ագուլեցի, Որագրություն, Յերեվան, 1938

ГРАММАТИЧЕСКАЯ КАТЕГОРИЯ ОПРЕДЕЛЕННОСТИ И НЕОПРЕДЕЛЕННОСТИ В СРЕДНЕВЕКОВОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

МЕЛКОНЯН ИРИНА

кафедра диаспорологии Ереванского Государственного Университета

В статье представлен анализ особенностей проявления грамматических категорий определенности и неопределенности в средневековом армянском языке. Артикуляция, будучи присущей во всех периодах литературного армянского языка, в каждом из этих периодов проявляется своими различными значениями и структурными характеристиками. Средневековой армянский язык характеризуется выражением разнообразных форм грамматических значений, поскольку многие структурные элементы древнеармянского языка несут изменения и формируются новые единицы. Исследования показывают, что использование артикля тоже пока не упорядочиван, поскольку параллельно с древнеармянскими составляющими проявляются новые реалии артикуляции, которые также не полностью упорядочиваны.

Ключевые слова: грамматическая категория определенности и неопределенности, определенный и неопределенный артикль, средневековый армянский язык, древнеармянский язык, грамматики, существительное, местоимение, система склонения, морфем, предлог.

THE GRAMMATICAL FORM OF THE ARTICLE IN THE MIDDLE ARMENIAN

MELKONYAN IRINA

Diaspora Studies of Yerevan State University

This article presents an analysis of the features of the grammatical form of article manifestation in the Middle Armenian. Article, being inherent to all periods of the literary Armenian language, in each of them having different semantic and structural characteristics. The Middle Armenian is characterized by the polymorphy of grammatical meanings, as many of the Grabar Armenian forms are being changed and new units are formed. Studies have shown that the application of an article is not yet structured, as parallel to the Grabar forms, new realities of article are manifested which are not fully structured as well.

Keywords: grammatical form of an article, definite and indefinite article, Middle Armenian, Grabar Armenian, grammarians, noun, pronoun, inflection system, morpheme, preposition.